ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վահրամ Բաղդասարյանի, Սամվել Ֆարմանյանի, Խոսրով Հարությունյանի, Էդուարդ Շարմազանովի, Արփինե Հովհաննիսյանի, Մարգարիտ Եսայանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-732-05.03.2015-ՊԻ-010/0) վերաբերյալ:

Սկզբունքորեն չառարկելով ներկայացված առաջարկությանը, այնուամենայնիվ, հաշվի առնելով խնդրո առարկա կարգավորումների վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև այլ երկրների իրավակիրառ պրակտիկան՝ խնդրի ամբողջական կարգավորման նպատակով առաջարկում ենք՝

1) անգործունակ ճանաչված անձի գործունակությունը վերականգնելու համար, բացի անձամբ և փաստաբանի միջոցով դատարան դիմելու իրավունքից, հնարավորություն նախատեսել ընտրելու այն անձին, ով նման հարցով կդիմի դատարան.

2) նախատեսել տվյալ անձի համար որոշումների կայացմանն աջակցող սուբյեկտների ցանկ, ինչը սահմանափակված չի լինի միայն տվյալ անձի ընտանիքի անդամներով.

3) հաշվի առնել դատարանների ծանրաբեռնվածությունը և մշակել որոշակի մեխանիզմներ՝ բազմաթիվ անհիմն դիմումներից խուսափելու համար.

4) կարգավորել դիմումները ներկայացնելու և քննելու ընթացակարգեր՝ խուսափելու համար անգործունակ ճանաչված անձի խնամակալների և բժիշկների լիազորությունների չարաշահումից:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենքի նախագիծն ընդունելի կհամարի ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյանը:

Հայտնում ենք նաև, որ օրենքի նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ: Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով *հստակեցվում են անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության հետ կապված որոշ դրույթներ* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) կարգավորվում են քաղաքացուն անգործունակ և գործունակ ճանաչելու վերաբերյալ գործերի քննության հետ կապված իրավահարաբերությունները:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:
Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չի առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով, մասնավորապես, առաջարկվում է սահմանել, որ անձին անգործունակ ճանաչելու գործերով դատական նիստին քաղաքացու մասնակցությունը պարտադիր է, եթե նրա մասնակցությունը դատական նիստին վտանգ չի ներկայացնում քաղաքացու կամ այլ անձանց կյանքի և առողջության համար, իսկ այն դեպքում, եթե դատարանում դատական նիստին քաղաքացու մասնակցությունը վտանգ է ներկայացնում քաղաքացու կամ այլ անձանց կյանքի և առողջության համար, գործը քննվում է քաղաքացու գտնվելու վայրում, այդ թվում՝ հոգեբուժական հաստատությունում: Սա նշանակում է, որ Նախագծի ընդունումը ենթադրում է նաև արտադատարանական դատական նիստերի անցկացում, ինչը կարող է հանգեցնել դատական լրացուցիչ ծախսերի, հետևաբար նաև ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ հատկացումների անհրաժեշտության:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ օրենքի նախագծի ընդունումը կարող է հանգեցնել ՀՀ պետական բյուջեի ծախսերի ավելացման, ինչի չափը գնահատել հնարավոր չէ՝ պայմանավորված տվյալների բացակայությամբ:

Միաժամանակ գտնում ենք, որ օրենքի նախագծի ընդունման ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների, ինչպես նաև համայնքների բյուջեների եկամուտների ու ծախսերի վրա կլինի չեզոք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-732-05.03.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 171-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ. «1. Քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործը դատարանը քննում է խնամակալության եւ հոգաբարձության մարմնի ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ: Քաղաքացու մասնակցությունը դատական նիստին պարտադիր է, եթե նրա մասնակցությունը դատական նիստին վտանգ չի ներկայացնում քաղաքացու կամ այլ անձանց կյանքի կամ առողջության համար: Այն դեպքում, եթե դատարանում դատական նիստին քաղաքացու մասնակցությունը, վտանգ է ներկայացնում քաղաքացու կամ այլ անձանց կյանքի կամ առողջության համար, գործը քննվում է քաղաքացու գտնվելու վայրում, այդ թվում՝ հոգեբուժական հաստատությունում:»:

Հոդված 2. Օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասը «դատարանը՝» բառից հետո լրացնել «անգործունակ ճանաչված անձի, նրա փաստաբանի, » բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատարավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 171-րդ հոդվածը սահմանում է. «Քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործը դատարանը քննում է խնամակալության եւ հոգաբարձության մարմնի ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ: Քաղաքացին կարող է կանչվել դատական նիստի, եթե դա թույլ է տալիս նրա առողջական վիճակը:»:

Նշված կարգավորումը քաղաքացու մասնակցությունը դատական նիստին պայմանավորում է նրա առողջական վիճակով, սակայն նույնիսկ այն դեպքում, երբ անձի առողջական վիճակը թույլ է տալիս մասնակցել դատաքննությանը,

օրենսգիրքը դատարանի հայեցողությանն է թողնում նրան դատական նիստին հրավիրելու հարցը: Օրենսգիրքը չի սահմանում, թե ինչ ընթացակարգով եւ ինչ չափանիշների հիման վրա է որոշվում դատական նիստին քաղաքացու անձնական մասնակցության հնարավորությունը: Այս կապակցությամբ հատկանշական է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) Շտուկատուրովը ընդդեմ Ռուսաստանի գործով (Shtukaturov v Russia 44009/05 (2008)) որոշումը: Ռուսական դատարանը Պ.Շտուկատուրովին անգործունակ էր ճանաչել միայն փորձագետի եզրակացության հիման վրա՝ նրան մասնակից չդարձնելով այն դատական նիստին, որի ժամանակ քննվում էր նրան անգործունակ ճանաչելու դիմումը: Այս կապակցությամբ ՄԻԵԴ-ը նշել է. «Դիմումատուն երկակի դեր ունի քննության ընթացքում. նա եւԲ շահագրգիռ անձ է, եւԲ միեւնույն ժամանակ դատարանի քննության հիմնական օբյեկտ: Այսպիսով, դիմումատուի մասնակցությունը անհրաժեշտ է նրա համար, որ դատարանը կարողանա սեփական պատկերացումը կազմել նրա հոգեկան վիճակի վերաբերյալ: Հարկադիր բուժման մի շարք դեպքերում Եվրոպական դատարանը սահմանել է, որ հոգեկան խանգարում ունեցող անձը պետք է լսվի անձամբ, իսկ եթե անհրաժեշտ է ներկայացուցչի միջոցով (օրինակ՝ Եվրոպական դատարանի որոշումը Winterwerp v. the Netherlands գործով): Տվյալ գործով դիմումատուին սպառնում էր ազատության կորուստը: Սակայն քննվող գործի ելքը առնվազն նույնքան կարեւոր է դիմումատուի համար, քանի որ ազդեցություն ուներ դիմումատուի ինքնավարության վրա կյանքի գրեթե բոլոր բնագավառներում եւ ենթադրում էր ազատության հնարավոր սահմանափակում:»:

Այս գործով ՄԻԵԴ-ը հանգել էր այն եզրակացության, որ առանց անձի մասնակցության, միայն գրավոր փաստաթղթերի հիման վրա դատարանի կողմից գործը քննության իրականացումը հիմնավոր չէ, եւ արձանագրել էր, որ տեղի է ունեցել Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի (Արդար դատաքննության իրավունք) խախտում: Հիմք ընդունելով վերոգրյալը պետք է նշել, որ Օրենսգրքի առկա կարգավորումը էականորեն սահմանափակում է արդար դատաքննության իրավունքը: Այդ իսկ պատճառով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով(այսուհետ՝Նախագիծ) նախատեսվում են այնպիսի կարգավորումներ, որոնք կապահովեն անձին անգործունակ ճանաչելու գործերով նրա մասնակցությունը դատական նիստին: Նախագծով սահմանվում է, որ քաղաքացու մասնակցությունը դատական նիստին պարտադիր է, եթե նրա մասնակցությունը դատական նիստին վտանգ չի ներկայացնում քաղաքացու կամ այլ անձանց կյանքի կամ առողջության համար, իսկ այն դեպքում, եթե դատարանում դատական նիստին քաղաքացու մասնակցությունը, վտանգ է ներկայացնում քաղաքացու կամ այլ անձանց կյանքի կամ առողջության համար, գործը քննվում է քաղաքացու գտնվելու վայրում, այդ թվում՝ հոգեբուժական հաստատությունում:

Օրենսգրքի 173-րդ, սահմանելով գործունակության վերականգման կարգը, սահմանում է, որ դատարանը վճիռ է կայացնում ապաքինվածին գործունակ ճանաչելու մասին միայն խնամակալի, ընտանիքի անդամի կամ հոգեբուժական հաստատության տնօրինության դիմումով, այսինքն՝ անձը զրկված է անմիջականորեն կամ իր փաստաբանի միջոցով իր գործունակությունը վերականգնելու նպատակով դատարան դիմելու հնարավորությունից: Հարկ է նշել, որ ՄԻԵԴ-ը Նատալյա Միխայլենկոն ընդդեմ Ուկրաինայի (Natalya Mikhaylenko v. Ukraine 49069/11(2013)) գործով վճռում արձանագրել է, որ անգործունակության վերանայման խնդրանքով դատարան դիմելու անգործունակ անձի իրավունքը նրա ամենակարեւոր իրավունքներից է, քանի որ այդ իրավունքի վերականգնումը կարող է որոշիչ նշանակություն ունենալ նրա մյուս բոլոր իրավունքների վերականգնման համար: Այդիսկ պատճառով նախագծով ամրագրվել է, որ բացի խնամակալից, ընտանիքի անդամից կամ հոգեբուժական հաստատության տնօրինությունից գործունակության վերականգման համար կարող է դատարան դիմել ինչպես քաղաքացին այնպես էլ, նրա փաստաբանը: